



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

7 May 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Այս շաբաթ, ուսուցիչների գովաբանման շաբաթն է և բուժքույրերի օրը: Այժմ, ավելի քան երբևէ, մենք պետք է գնահատենք նրանց, ոչ միայն մեկ օր կամ մեկ շաբաթ, այլ ամեն օր:

Երեխաների ինամբ.

Ինչպես արդեն լսած կլինեք, Լոս Անջելեսի գավառն անցնում է նահանգը բացելու [2-րդ փուլին](#): Սա նշանակում է, որ մեր համայնքում երեխաների ինամբի կարիք է զգացվելու: Մենք հարցում ենք անցկացնում ինամբի կենտրոններում արձանագրված ընտանիքների միջև, որպեսզի պարզենք, թե երեխաների ինամբի քանի կենտրոն է հարկավոր բացել: Գալիք մի քանի օրերի ընթացքում, այդ ընտանիքները տեղեկություն կստանան երեխաների զարգացման գրասենյակի կողմից:

2020-21 ուսումնական տարում դպրոցների բացելը.

Մենք շարունակում ենք հետաքրքրվել, թե ինչպես են մյուս երկրները, նահանգները և դպրոցական շրջանները բացում դպրոցները: Մենք բազմաթիվ իրավիճակներ ենք մշակում, որոնք ճկունություն կպահանջեն նահանգի կողմից և կախված կլինեն պետական բյուջերից (ինդրում եմ նայել այս էջի ներքևի մասին): Մենք գիտակցում ենք, որ կրթությունը տարբեր է լինելու մեր օգտագործած և հեռակա կրթության մոդելներից, որոնք հիմա կիրառում ենք: Ավելի շատ ուղղորդություն ստանալուց հետո, մենք կհարցնենք ձեր կարծիքը և կկիսվենք այս նոր մոդելի մանրամասներով: Չնայած, որ այն շատ դժվարին կթվա, մենք պետք է օգտվենք այս ճգնաժամից և ստեղծագործ ձևով հոգանք մեր աշակերտների, ընտանիքների և աշխատակիցների կարիքները:

Բյուջե.

Այսօր, Կալիֆոռնիայի նահանգի ֆինանսների գրասենյակը և նահանգապետ Նյուսոմը, մոայլ հուշագիր հրապարակեցին՝ նախապես վերանայելով մայիսյան վերափոխումները, մինչև նահանգապետի հաջորդ շաբաթվա հայտարարություններ կատարելը: Կալիֆոռնիայի դպրոցների գրասենյակի ասոցիացիան հեշտացրեց մեր համար շեշտադրում դնել և պաշտպանել հանրային կրթության ֆինանսավորումը: [Սեղմել այստեղ ձեր օրենսդիր մարմիններին էլեկտրոնային փոստով նամակ ուղարկելու համար](#)

Երեքշաբթի օրը, մայիսի 19-ին, երեկոյան ժամը 7-ին, տեղի կունենա կրթական գրասենյակի հատուկ ժողովը՝ բյուջեի իրավիճակը և ֆինանսավորման առաջնահերթությունները քննարկելու համար: Դուք կարող եք դիտել այդ ժողովը [սեղմելով այստեղ](#)

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն: Շրջանային
նորությունների հաջորդ թողարկումը կլինի մյուս հինգշաբթի օրը, **մայիսի 14-ին**:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Շիլլ
Գերատեսուչ